Տ. ՄՅՈՒՌՈՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԼՎԼԳՅԱՆ

Ծնվել է 1950 թ. հուլիսի 23-ին Լիբանանի Տրիպոլի քաղաքում:

Նախնական կրթությունը ստացել է տեղի Խրիմյան-Նուպարյան ազգային վարժարանում:

1968 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1967 թ. դեկտեմբերին, Ս. Ստեփաննոսի տոնին, ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Հայկազուն արքեպս. Աբրահամյանի:

1969 թ. ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը՝ ավարտաճառ ներկայացնելով «Գիրք Սաղմոսացի քննությունը», և արժանացել գերազանց գնահատականի:

1970 թ. մայիսին, երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, ուղարկվել է Բուենոս Այրես (Արգենտինա)՝ իր ուսումը շարունակելու «Էլ Սալվադոր» (Ս. Փրկիչ) և «Բուենոս Այրես» համալսարաններում՝ հետևելով աստվածաբանության, փիլիսոփայության և հոգեբանության դասընթացների: Ուսումնառության տարիներին մասնակցել է նաև Բուենոս Այրեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր ծառայությանը՝ սպասավորելով որպես սարկավագ, և միաժամանակ դասավանդել եկեղեցուն առընթեր Ս. Գրիգոր Լուսավորիչ երկրորդական վարժարանում հայոց լեզու, Հայ Եկեղեցու պատմություն և անգլերեն:

1979 թ. վերադարձել է Մայր Աթոռ և դեկտեմբերի 24-ին ձեռնադրվել կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Արսեն եպս. Բերբերյանի:

1980 թվականից հոգևոր հովիվն է Իսի լե Մուլինոյի հայոց Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցու (Ֆրանսիա):

2002 թ. մարտի 15-ին ծայրագույն վարդապետական թեզ է պաշտպանել «Խոսք և ներշնչում» թեմայով: